

«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԷՏՍ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՑ»*
(իմաստուն ասույթներ քարոզների համար)

151. **Սենեքայ ասացեալ.** Սկիզբն փրկութեան է ճանաչումն մեղաց:

152. Որ գործէ զանօրէնութիւն, թշնամի է անձին իւրոյ:

153. Մի խօսեացիս զազիր, քանզի նովաւ առ սակաւ կորնչի ամօթխածութիւն:

154. Յաղտեղի խօսից պահեա զքեզ, թէ թոյլ տաս այնպիսեացն սնուցանէ զանամօթութիւն, զբանս օգտակարս առաւել սիրեա քան զծաղրականս:

155. Ոչ օգնէ բախտն այն, որ զբազումս ձեռնարկէ. զի որ վազէ զհետ երկուց նապաստակաց համանգամայն և զերկուսն կորուսանէ:

156. Որ ոչ ինչ խորհի վասն ապագային, անզգուշութեամբ անկանի որոգայթ, զի յառաջատեսութիւն հեռացուցանէ զապառնի չարն:

157. Ոչ են սուրբք այնոքիկ, որք ատամամբք, բերանով և փորով են պարկեշտք, այլ՝ որք աչօք:

158. Ոչ թէ մեծաւ ծախիւք լցեալ լինի քաղցն, այլ՝ փառասիրութիւն:

159. Ունիմք զպատիւ ծերոց և զմոլորութիւնս տղայոց:

160. Պարտ է. հանդարտ մտօք լսել զնախատինս յիմարաց և նախատելի համարել զնախատինս նոցա:

161. Խոտորեցուցանեն զմարդն յուղղութենէն մեծութիւն և պատիւն:

162. Մեղմագոյն հրամայողին դիւրեաւ հնազանդին ամենեքեան:

163. Այնպէս լեր ընդ ստորնագունին, զոր օրինակ կամիս լինել ընդ քեզ վերնագոյնն:

164. Այն որ աշխարհասէրքն են, հեշտանան և ունին նուազ հեշտութիւն և ոչ ունին հիմն, որոյ վախճանն է տրտմութիւն և ցաւ:

165. Մահն յամենայն ժամ յամենայն տեղիս դարանակալ լինի քեզ. եթէ իմաստուն ես յամենայն ժամ սպասեա նմա, զի մի անպատրաստ գտեալ վնասեսցէ զքեզ:

166. Անթիւք են որ զքաղաքս և զժողովուրդս յաղթեցին և ստացան, այլ սակաւագոյնք են, որ զինքեանս յաղթեցին և ստացան:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1990 թ. №№ Ը—Թ-ից, 1991 թ. Ա—Բ—Գ-ից և Թ—Ժ-ից:

151. Սենեքայի կողմից ասված:

Մեղքերի ընդունումը փրկության սկիզբն է:

152. Ով անօրենություն է անում, իր անձի թշնամին է:

153. Զազրելի բաներ մի արա, որովհետև դրանով քիչ-քիչ կորցնում է ամոթխածությունը:

154. Աղտոտ խոսքերից ետ պահիր քեզ, որովհետև եթե թույլ տաս, այդ խոսքերը ամոթություն կցուցանեն, օգտակար խոսքերը ավելի սիրիր, բան ծաղրական խոսքերը:

155. Բախտը չի օգնում նրան, որ շատ բանի է ձեռք գցում, որովհետև ով որ միաժամանակ երկու նպատակների ետևից է վազում, երկուսն էլ կորցնում է:

156. Ով որ ապագայի մասին չի մտածում, անզգուշորեն որոգայթի մեջ է ընկնում, որովհետև կանխատեսությունը հեռացնում է գալիք չարը:

157. Սուրբ չեն նրանք, որոնք ատամներով, բերանով ու փորով են պարկեշտ, այլ նրանք որ աչքերով:

158. Մեծ ծախսերով քաղցը չի հագեցնում, այլ՝ փառասիրությունը:

159. Ծերերի պատիվն ունենք և երեխաների մոլորությունները:

160. Պետք է համբերությամբ լսել հիմարների նախատինքները և նախատելի համարել նրանց նախատինքները:

161. Հարստությունն ու պատիվը մարդուն շեղում են ուղիղ ճանապարհից:

162. Մեղմորեն հրամայողին բոլորը դյուրին են հնազանդվում:

163. Քեզանից ներքև գտնվողի հետ եղիր այնպես, որ ուզում ես քեզանից վերև գտնվողը լինի քեզ հետ:

164. Նրանք, որոնք աշխատասեր են, վայելում են, բայց նրանց վայելքը նվազ է և հիմք չունեն. դրա վախճանը ցավն է ու տրտմությունը:

165. Մահը ամեն ժամի և ամեն տեղ դարանակալում է քեզ. Եթե իմաստուն ես ամեն ժամի, սպասիր նրան, որպեսզի անպատրաստ գտնելով չվնասի քեզ:

166. Անթիվ են նրանք, որոնք քաղաքների և ժողովուրդների հաղթեցին ու գրավեցին, սակայն նվազագույն են նրանք, որոնք իրենք իրենց հաղթեցին ու գրավեցին:

167. Իմաստունի միտքը հոգ է տանում երեք ժամանակներին, քանի որ հիշում է անցյալը, ներկան լավ է կառավարում և կանխատեսում է ապառնին:

168. Թուլիոսի կողմից ասված:

Հեշտանքը հանգցնում է հոգու սնոտի լույսը:

169. Որ տանը վիշապ է բնակվում, այնտեղով աղավնի երբեք չի անցնում, նույնպես և որտեղ նախանձ կա, այնտեղ Սուրբ Հոգին չի մտնում:

170. Իզիդորոսի կողմից ասված:

Ով ցանկանում կամ ձգտում է ավագություն ունենալ, նախ թող իրեն քննի: Եթե նրա վարքը համապատասխանում է պատվին, որով ինքն իրեն չի հակասի, թող խոնարհաբար մոտենա այն բանին, ինչին կոչված է:

171. Բոլոր մեղքերը ապաշխարությամբ բժշկվում են, բայց բեկված կույսությունը երբեք չի նորոգվում:

172. Բոջախոհության առաջին սլաքը աչքի մեջ է:

173. Ինչպես օգուտ չէ վերին դեղը, որ սլաք ունի, նույնպես էլ աղոթքը, որ մեղք ունի մտքում:

167. Միտք իմաստնոյն հոգայ վասն երից ժամանակաց, զի զյանցեալն չիշէ, զներկայն բարւոք կառավարէ և յապառնոյն յառաջամիտ լինի:

168. **Թուլիոսի ասացեալ.** Հեշտութիւն շիջուցանէ զամենայն լոյս հոգոյն:

169. Յորում տան բնակիցէ քարք, ոչ երբեք անցանէ ընդ այն աղաւնի, նոյնպէս և ուր իցէ նախանձ, ոչ մտանէ ի նա Հոգի Սուրբ:

170. **Իզիդորոսի ասացեալ.** Որ գահերիցութեան ցանկայ կամ ջանայ ունել, նախ որոնեսցէ զինքն, եթէ վարքն է յարմար պատուոյն, որ թէ ոչ հակակայեսցէ զինքն, խոնարհութեամբ մատչիցի, ի յոր կոչեալ լինի:

171. Ամենայն մեղք ապաշխարութեամբն առնու զբժշկութիւն, բայց բեկեալ կուսութիւն ոչ երբէք նորոգի:

172. Առաջին սլաք բղջախոհութեան է յաչքն:

173. Որպէս ոչ է օգուտ դեղն վերին ունելոյ զսլաքն, սոյնպէս և ոչ աղօթքն որ ունի զմեղս ի մտի:

174. Նախ պարտ է մաքրել զսիրտն և զատել յաշխարհական խորհրդոց, զի մաքրեալ սիրտն վերասցի առ Աստուած:

175. Աղօթիւքն սրբիմք, ընթեռնլովն ուսանիմք. երկոքինն բարի են, եթէ արասցուք:

176. **Հասարակաց վարդապետաց ասացեալ, որոց անուանքն ոչ գտաք.** Մեծ են գործքն աստուածային և հրաշալիք, զոր ոչ միտք խորհել կարէ և ոչ լեզու ճառել ոչ միայն վերջնոցս տարակացելոցս, այլև՝ գերագունիցն զօրաց:

177. Քրիստոս յերկնից խոնարհեցաւ վասն քո և դու ոչ խոնարհիս վասն եղբօրն, նա գին ետ քեզ և գնեաց. և դու տեսանես զեղբայրն քո կարօտեալ և անտես առնես, նա զարիւնն եհեղ վասն քո. և դու արտասուս ոչ հեղուս վասն եղբօրն, թող թէ զարիւնդ:

178. Ոչ է պարտ առաջնորդին յարաժամ ներել և քաղցրաբարք լինել:

179. Անգիտութիւն է մայր ամենայն չարեաց:

180. Առաքինութիւնք առանց իւրոց ջանիցն ոչ կարէ լինել. կարօտանայ ուսուցչի և կառավարի, սակայն առանց ուսուցչի ուսեալ լինի մեղքն:

181. Ոչ է պարտ այլ իրաց ցանկալ մարդոյ քան թէ բարի լինել, զի թէ ոչ է բարի մարդն, այլքն ամենայն ոչ վայել է նմա, այսինքն՝ քահանայութիւն, կրօնաւորութիւն և այլն:

182. Կամի՞ս թագաւորել, ցուցից քեզ մեծ թագաւորութիւն, նախ տիրեա քեզ, և յայնժամ ամենեքեան հնազանդին քեզ:

183. Լաւ է մի որդի երկիւղած յԱստուծոյ, քան հազար որդիք ամբարիշտք:

184. Ի միտ աձ զօր մահուն և զտանջանս դժոխոց, և ոչ մեղանչես:

185. Ամենայն ոք իւր չարի և բարոյ պատճառ լինի:

186. Անկար է իմանալ ընդ Աստուծոյ և կերպիւ ինչ առ նա հպիլ, եթէ ոչ դադարեսցի ոք ի նիւթաւոր ներգործութեանց թէ ըստ ըզգայութեան և թէ ըստ իմացման:

187. Եթէ կամիս ուսանիլ պարտիս և հնազանդիլ:

188. Ոչ ունիցի մարդ ներումն յաւուրն դատաստանի վասն ոչ ուսանելոյն:

189. Թէ կամիմք կեալ ընդ Աստուծոյ պարտիմք սիրելութիւն առնել ընդ նմա և առնել զոր ինչ նա կամի:

174. Նախ անհրաժեշտ է մաքրել սիրտը և զատել աշխարհային խորհուրդներից, որովհետև մաքրված սիրտն է վերանում առ Աստված:

175. Աղոթքով սրբվում ենք, ընթերցելով՝ ուսանում, երկուսն էլ բարի են եթե կատարենք:

176. Ընդհանրական Վարդապետների կողմից ասված, որոնց անունները չգտանք.

Մեծ են աստվածային գործերն ու հրաշալիքները, որ ոչ միտքը կարող է խորհել և ոչ լեզուն ճառել. ոչ միայն օտարացած վերջիններիս, այլև գերագույն զորքերի: (Միտքն ու լեզուն):

177. Քրիստոս երկնքից խոնարհվեց քեզ համար, բայց դու չես խոնարհվում քո եղբոր համար, նա գին վճարեց քեզ համար և գնեց, իսկ դու տանում ես քո կարոտյալ եղբորը և անտեսում ես, նա իր արյունը հեղեց քեզ համար, իսկ դու արտասուք չես հեղում քո եղբոր համար, ուր մնաց արյունդ:

178. Առաջնորդը պարտավոր չէ հարաժամ ներել և քաղցրաբարո լինել:

179. Բոլոր չարիքների մայրը տգիտությունն է:

180. Առաքինությունները առանց սեփական ջանքերի չեն կարող լինել, ուսուցչի կարիք ունի և կառավարվում է, սակայն մեղքը առանց ուսուցչի էլ սովորում են:

181. Մարդը պետք չէ այլ ցանկա. քան բարի լինելը, որովհետև եթե մարդը բարի չէ, բոլոր մնացած բաները, այսինքն՝ քահանայությունը, կրոնավորությունը և այլն, վայել չեն նրան:

182. Ցանկանո՞ւմ ես թագավորել, քեզ մեծ թագավորություն ցույց կտամ, նախ տիրապետիր քեզ և այն ժամանակ ամենքը կհնազանդվեն քեզ:

183. Լավ է Աստծուց երկյուղած մեծ որդի (ունենալ), քան հազար ամբարիշտ որդիներ:

184. Մտածիր մահվան օրվա և դժոխքի տանջանքների մասին. և չես մեղանչի:

185. Յուրաքանչյուրը ինքն է իր չարի և բարու պատճառը լինում:

186. Անկարող է որևէ մեկը Աստծո մասին իմանալ և որևէ կերպ նրան հպվել, եթե և՛ զգայությամբ, և՛ իմացությամբ չդադարի նյութական ներգործություններից:

187. Եթե ցանկանում ես սովորել՝ պարտավոր ես և հնազանդվել:

188. Չսովորելու պատճառով մարդը Դատաստանի օրը ներում չի գտնելու: (Չի ներվելու):

189. Եթե ցանկանում ենք ապրել Աստծո հետ, պարտավոր ենք սիրել Նրան և կատարել այն, ինչ որ Նա է կամենում:

190. Քրիստոսի չարչարանքների հիշատակը մեղքերի թողություն է հիշողի համար:

191. Եթե վայելք ես սիրում, սիրիր Աստծուն, որովհետև Նրա մեջ են բոլոր վայելքները:

192. Ընկերոջդ արա այն, ինչ որ քեզ ես ցանկանում, և ինչը քեզ չես ցանկանում, մի արա նրան:

193. Մի ընդունիր զգացական անօգուտ խորհուրդներ և նման երազներ, որով քո միտքը հեշտանք է գտնում:

194. Աստծուց հետո ամեն ինչից վեր գովելի է ճշմարտությունը:

195. Խոհեմությունն է ծնողը և պահապանը բոլոր առաքինությունների:

196. Սեփական զրպարտությունների համար համբերելը արդարություն է,

190. Յիշատակ չարչարանացն Քրիստոսի է թողութիւն մեղաց յիշողին:

191. Եթէ սիրես զհեշտութիւն, սիրեա զԱստուած, զի ի նմա են ամենայն հեշտութիւնք:

192. Զայն արա ընկերի քում, զոր քեզ կամիս և զոր քեզ ոչ կամիս, մի արասցես նմա:

193. Զգաստացեալ և զանօգուտ խորհուրդս և զնմանս երազոց մի ընդունիցես, որով հեշտանան միտք քո:

194. Յետ Աստուծոյ քան զամենայն ինչ գովելի է ճշմարտութիւն:

195. Խոհեմութիւն է ծնօղ և պահապան ամենայն առաքինութեանց:

196. Համբերել վասն իւրոց զրպարտութեանց արդարութիւն է, և աստուածայնոց (Աստուածոյ—Հ. Ք.) զրպարտութեանց՝ ամբարշտութիւն:

197. Դատարկութիւն է դուռն ամենայն մոլութեանց:

198. Հարուածք գանին առնէ կապուտակս, իսկ հարուածք լեզուին սպառէ զոսկերս:

199. Մարդ՝ սովորեալ ի բանս նախատանաց, ոչ լինի խրատեալ զամենայն աւուրս իւր:

200. Յառաջ քան զվախճանն քո գործեա զարդարութիւն, զի ի դժոխս ոչ գտանի կերակուր:

201. Եթէ բառնաս զդատարկութիւն, խորտակեսցին աղեղունք թշնամոյն:

202. Երիտասարդքն ունին զմահն յետուստ կողմանէ, և ծերքն՝ առաջի աչաց:

203. Խոստովանութիւն է կեանք և փառք մարդոյ. եթէ բաղձաս գեղեցկութեան հոգոյ, սիրեա զխոստովանութիւն:

204. Ընթերցումն Սուրբ Գրոց առնէ խելամուտ զիմացումն և քարշէ արտաքս զմիտս ի յունայնութեանց աշխարհի, և ածէ ի սէրն Աստուծոյ:

205. Որք առաւել յաճախէ ոք աստուածային, ընթերցումն այնքան ընդունի ի նմանէ զառատագոյն իմացումն:

206. Որպէս կապանք ոտիցն արգելէ զսուրհանդակն, այնպէս և տրրտմութիւն արգելէ զմարդն յաստուածային տեսութիւն:

207. Սուտ է երանութիւն այն, որ առնէ երկչոտ և ոչ երբեք՝ անհոգ:

208. Ծառայել ագահութեանցն է ուրանալ զԱստուած:

209. Ոչ կարէ միտքն լինել ազատ ի խոկումն աստուածային, որ պատաղի երկրաւոր ցանկութեամբ:

210. Թաք ողորմութիւն քո ի ծոց աղքատին, զի յաւուր դատաստանին գտցես զնա ի ծոցն Քրիստոսի:

211. Քրիստոս մահուամբն իւրով ստացաւ զինչ որ ուտեն եկեղեցականքն, ուստի փոխարէն այնմ պարտական[7] են միշտ գովել զՔրիստոս:

212. Եկեղեցականքն ուտեն զմահ, զի ուտեն զողորմութիւն, որ տուեալ է վասն մեռելոց, որք են ի տանջանս, ուստի պարտին երկնչիլ, որք ուտեն հեշտութեամբ:

213. Դեռևս տայ լեղի Քրիստոսի, որ անարժանութեամբ մատչին ի սուրբ հաղորդութիւն, և ծանրագոյնս մեղանչէ քան զխաչահանունքն:

214. Պարկեշտութիւն է արմատ սուրբ, յորմէ վերընձիւղէն բազում ստեղունք և երփներփն առաքինութիւնք և շնորհք պտղաբերին:

---

[7] Ձեռ. պարտակական:

բայց Աստծո դեմ արված զրպարտություններին (համբերելը)՝ ամբարիշտություն:

197. Բոլոր մոլորությունների դուռը դատարկությունն է:

198. Գավազանի հարվածը կապտեցնում է, իսկ լեզվի հարվածը ոսկորներն է ջարդում:

199. Նախատական խոսքերին սովորած մարդը ամբողջ կյանքում չի խրատվի:

200. Արդարություն գործիր նախքան քո վախճանը, որովհետև դժոխքում կերակուր չի գտնվի:

201. Եթե անգործությունը վերացնես, կխորտակվեն թշնամու աղեղները:

202. Երիտասարդները մահը տեսնում են հետևի կողմից, իսկ ծերերը՝ աչքերի առաջ:

203. Խոստովանությունը մարդու կյանքն ու փառքն է, եթե ձգտում ես հոգու գեղեցկության, սիրիր խոստովանությունը:

204. Սուրբ Գրքի ընթերցումը իմացությունը խելամիտ է դարձնում և միտքը դուրս է քաշում աշխարհի ունայնությունից և մղում է դեպի Աստուծո սերը:

205. Ով առավել հաճախակի է դարձնում աստվածային ընթերցումը այնքան ավելի առատ իմացություն է ստանում նրանից:

206. Ինչպես ոտքերի կապանքները խափանում են սուրհանդակին, այնպես և տրտմությունը խափանում է մարդուն աստվածային տեսությունից:

207. Սուտ է այն երանությունը, որ երկչոտ է դարձնում, բայց ոչ երբեք՝ անհոգս:

208. Ագահություններին ծառայելը Աստծուն ուրանալ է (նշանակում):

209. Միտքը, որ պատված է երկրավոր ցանկությամբ, աստվածայինի մասին խոկալիս, չի կարող ազատ լինել:

210. Քո ողորմությունը թաքցրու աղքատի ծոցում, որպեսզի Դատաստանի օրը այն գտնես Քրիստոսի ծոցում:

211. Քրիստոս իր մահվամբ ձեռք բերեց այն, ինչը ուտում են եկեղեցականները, ուստի դրա փոխարեն պարտական են միշտ գովել Քրիստոսին:

212. Եկեղեցականները մահ են ուտում, որովհետև ուտում են այն ողորմությունը, որ տրված է մեռելների համար, որոնք տանջանքների մեջ են, ուստի ովքեր հաճույքով են ուտում, պարտավոր են երկնչել:

213. Դեռևս տրվում է Քրիստոսի լեղին, ով անարժանաբար է մոտենում Սուրբ Հաղորդության և ծանրապես մեղանչում է, քան (Տիրոջը) խաչողները:

214. Պարկեշտությունը սուրբ արմատն է, որից վերընձյուղվում են բազում ճյուղերը և երփներփ առաքինությունները, նաև շնորհներ է պտղաբերում:

215. Որկրամոլությունը անիծված արմատն է, որից պիղծ խորհուրդներ և անբան տենչանքներ են բողբոջում, նաև հոգին է մեռնում:

216. Ով ցանկանում է վարձատրվել երկնքում, պետք է տենչա նրան:

217. Ո՞վ երանելի փայտ, քանզի օծյալ Միածինը տարածում է իր բազուկները քեզ վրա:

218. Բռնությամբ պաշտամունքը հաճելի չէ Աստծուն:

219. Ինչպես չղջիկը չի կարող նայել արեգակի լույսին, նույնպես մարդ-

215. Որկորամոլութիւն է արմատ անիծեալ, ուստի բողբոջին խորհուրդք պիղծք և անբան տենչմունք, ուստի և հոգին մեռանի:

216. Որ կամի վարձատրիլ յերկինս, տենչասցի նմա:

217. Ով երանեալ փայտ, քանզի օծեալ Միածինն տարածանէ զբազուկս իւր ի վերայ քո:

218. Բոնութեամբ պաշտօնն ոչ են հաճոյ Աստուծոյ:

219. Որպէս ջղջիկանն ոչ կարէ հայել ի լոյս արեգականն, սոյնպէս մարդկային իմացումն ոչ կարէ իմանալ զաստուածային լոյսն, քանզի անմատոյց է և ոչ կարեմք հասանել բնական լուսով, այլ՝ միայն լուսով հաւատոյն:

220. Անմիտք ցանկան վնասակարաց իւրեանց:

221. Ուր խոնարհութիւն է անդ է և իմաստութիւն:

222. Որ գնայ ընդ իմաստունս իմաստուն լիցի, իսկ բարեկամ անզգամաց նմանեսցի նոցին:

223. Մեծ յիմարութիւն է կամել զչարն և գործել, մեծ իմաստութիւն է խոտորիլ ի չարէ և փախչել:

224. Կոյսն, որ յարակից լինի աշխարհի, ոչ կարէ լինիլ ամենևին սուրբ:

225. Ով դու կոյսդ Քրիստոսի ի ներքուստ լեր գեղեցիկ և արտաքուստ կարկատան:

226. Մեր էաք, եթէ միտքն ոչ էին, այլ զի կան մերոյքն, ոչ եմք մեր, այլ՝ մերոցն, այսինքն՝ ընչիցն:

227. Միշտ զամենամաքուրն յիշելով և մեք՝ յիշողքս մաքրիցիմք:

228. Եկաց Յիսուս առաջի դատաւորին խոնարհ գլխով, սակաւ խօսիւք, մեղմ ձայնիւ, պայծառ դիմօք, վայր անկեալ աչօք, պատրաստ ի նախատինս, յօժար ի հարկանումն:

229. Անմահն զենանի վասն մահկանացուաց. կեանքն մեռանի վասն արարածոց:

230. Զամենայն ինչ ի քենէ և քև և ի քեզ արարեր զմեզ Տէր վասն քո և անհանգիստ է սիրտ մեր մինչև հանգիցէ ի քեզ:

231. Ոչ է պարտ բազմաիշխանութեան թէ միիշխանութիւն եղիցի:

232. Յայնժամ ճշմարիտ բաւական ուղղապէս կեցցես, եթէ զաստուածայինսն նախամեծարագոյն համարեսցես:

233. Ոչ է պարտ միշտ ի ներկայիս պշնուլ, այլ ի հանդերձեալն խոկալ, որ ի վեր է քան զամենայն:

234. Ճշմարիտ ապաշխարութիւն այն է՝ չանցեալ մեղսն ողբալ և զողբալիսն ոչ գործել:

235. Քամահող է և ոչ ապաշխարող, որ զանցեալ մեղքն դարձեալ կրկնիցէ:

236. Յայնժամ զղջանաս, յորժամ ոչ կարես մեղանչել, յայնժամ մեղքն զքեզ թողու և ոչ թէ դու՝ զմեղքն, վասն որոյ անօգուտ է զղջումն այն:

237. Ով մարդ ունիս անհոգ մուտ առ Աստուած, որ և ունիս զՈրդին միջնորդ և զմայրն բարեխօս, Որդին ցուցանէ Հօրն զխոցուած կողին, և մայրն ցուցանէ Որդոյն զկուրծս և զստինսն, ոչ կարէ լինել անդ ի բաց մերժումն ինչ, ուր հաւաքին այնքան նշանք սիրոյ:

238. Ով երբէք կարիցէ մտախոհ լինել, եթէ ձեռօք կնոջ բարձեալ լինի բարձողն աշխարհի:

239. Տէրն եղև ծառայ, յաւիտենականն՝ ժամանակաւոր, անչափն՝ փոքրիկ, վերնագոյնն՝ ստորնագոյն, անպարագրելին՝ տեղակալ, պարզն՝ բա-

կային իմացությունը չի կարող ճանաչել աստվածային լույսը, քանզի անմատչելի է և չենք կարող հասնել բնական լույսով, այլ՝ միայն հավատքի լույսով:

220. Անմիտները ցանկանում են իրենց վնասակարներին:

221. Որտեղ խոնարհություն է, այնտեղ է և իմաստությունը:

222. Ով քայլում է իմաստունների հետ, իմաստուն կլինի, իսկ անզգամների բարեկամը կնմանվի նրանց:

223. Մեծ հիմարություն է չարը ցանկանալ և գործել, մեծ իմաստություն է խոտորել չարից և փախչել:

224. Կույսը, որ միավորված լինի աշխարհին, չի կարող ամբողջովին սուրբ լինել:

225. Ո՞վ դու կույսդ Քրիստոսի, ներքուստ գեղեցիկ եղիր, իսկ արտաքուստ՝ կարկատված:

226. Մերն էինք, երբ մտածումները չկային, սակայն որովհետև մերոնք կան, մերը չենք, այլ մերոնցը, այսինքն՝ նյութինը:

227. Միշտ Ամենամաքուրին հիշելով, մենք՝ հիշողներս, կմաքրվենք:

228. Հիսուս դատավորի առաջ եկավ խոնարված գլխով, սակավ խոսքով, մեղմ ձայնով, պայծառ դեմքով, վայր իջեցրած աչքերով, պատրաստ նախատինքի և հոժար հարվածի:

229. Անմահը զենվում է մահկանացուների համար, կյանքը մեռնում է արարածների համար:

230. Ամեն ինչ Քեզանից է, Քեզանով և Քո մեջ ստեղծեց մեզ Տերը, Քեզ համար և անհանգիստ է մեր սիրտը մինչև հանգչի Քո մեջ:

231. Բազմիշխանության համար անհրաժեշտ չէ, որ միիշխանություն լինի:

232. Բավականաչափ ճշմարիտ, ուղղապես կապրես այն ժամանակ, երբ աստվածայինները նախամեծարագույն կհամարես:

233. Պետք չէ միշտ ներկայով սքանչանալ, այլ հանդերձյալի մասին խոկալ, որը վեր է ամեն ինչից:

234. Ճշմարիտ ապաշխարությունը այս է՝ չբուժված մեղքերի համար ողբալ, իսկ ողբալիքը չգործել:

235. Ով հին մեղքը դարձյալ կրկնելու է, արհամարող է և ոչ ապաշխարող:

236. Այն ժամանակ ես զղջում, երբ չես կարող մեղանչել, այն ժամանակ մեղքը քեզ կթողնվի և ոչ թե դու մեղքը կթողնես, այդ պատճառով անօգուտ է այդ զղջումը:

237. Ո՞վ մարդ, անհոգ մուտք ունես Աստուծո մոտ, որովհետև միջնորդ ունես Որդուն, բարեխոս՝ մորը. Որդին Հորը ցույց է տալիս կողի խոցվածը, իսկ մայրը Որդուն ցույց է տալիս կուրծքը և ստինքները, չի կարող ինչ-որ մերժում լինել այնտեղ, որտեղ սիրո այնքան նշաններ են հավաքվում:

238. Ով երբևէ կարող է մտածել, թե կնոջ ձեռքով կվերանա աշխարհը կրողը:

239. Տերը ծառա եղավ. Հավիտենականը՝ ժամանակավոր, Անչափը՝ փոքրիկ, Վերնագույնը՝ ստորագույն, Անբովանդակելին՝ տեղակալ, Պարզը՝ բաղադրյալ, Անտեսանելին տեսնվում է, Անշոշափելին՝ շոշափվում, հացը հրեշտակներին է կերակրում, տկարանում է երկնքի զորությունը: Ամբարշտի պատճառով ձաղկվում է գթությունը, հիմարի պատճառով ծաղրվում է իմաստությունը, ստի պատճառով մեռնում է ճշմարտությունը, անօրենի պատճա-

ղադրեալ[8], անտեսանելին տեսանի, անշօշափելին շօշափի, հացն հրեշտակաց կերակրի, զօրութիւն երկնից տկարանայ: Վասն ամբարշտին ձաղի գթութիւն, վասն յիմարին ծաղր լինի իմաստութիւն, վասն ստոյն մեռանի ճշմարտութիւն, վասն անօրինին մեռանի արդարութիւն, վասն անողորմին տանջի ողորմութիւնն, վասն թշուառականին ի բաց մերժի երջանկութիւն, քացախով և լեղեաւ արբենայ քաղցրութիւն:

240. Արդ, ի ներքոյ երկաքանչիւր տեսակացն, այսինքն՝ հացին և գինոյն ի Քրիստոս անբաժանելի, այսինքն՝ մարմինն, հոգին և Աստուած:

241. Խոկումն ի գիրս ազատ մտօք և հպիլ նոքօք յաստուածայինսն մտացն է դիւրութիւն և մարմնոյն անվաստակ ազատութիւն:

242. Վարժումն է ի գիրս առանց մտաւորութեան աշխատ առնէ զմարմինն և անմխիթար առնէ զհոգին:

243. Կրթութիւն է ամենայն ինչ եթէ բարի և եթէ չար:

244. Ստեղծաւ մարդն առ ի ճանաչել և սիրել զԱստուած նա ևս զմայլիլ նովաւ, այլ զայս ամենայն արգիլէ մեղքն:

245. Աստուած է ծայրագոյն բարի և ճշմարիտ կեանք, ի յոր և յորմէ և որով ամենեքեան կան:

246. Աստուած է իմանալի լոյս ի յոր և յորմէ և որով լուսաւորին ամենեքեան:

247. Աստուած է ծայրագոյն բարի, յորմէ են ամենայն բարիք:

248. Աստուած է բոլորակերտող և նախախնամիչ յոչէից էացելոց:

249. Ագահութիւն է սրընթաց որոգայթ:

250. Մեղք է զրկումն աստուածային օրինաց, և զրկումն երկնային պատուիրանացն:

251. Մարմին ոչ միայն ստեղծեալ է ի ագեստ հոգոյն, այլ մանաւանդ՝ ի փորձութիւն նորին իբրև զընտանի և զբնական թշնամի:

252. Առողջութիւն և ուժեղութիւն մարմնոյն միշտ մարտնչի ընդ խրատու արդարութեան և է բարեկամ իրաց չարաց:

253. Գեղ մարմնոյն սիրելն ի ժողովրդենէն և երիտասարդական եռանդն, նաև՝ փարթամութիւն բառնան ի քէն զճանաչելն, թէ զի՞նչ է մարդն, քանզի ոչ այլ ինչ է մարդն եթէ ոչ քսակ աղբալի, կերակուր որդանց, փտեալ մոխիր, կաւ դիւրաձորելի, խեցեղեն փութաբեկ և մորթ մեռելոտեաց, յետ մարդոյն որթն և յետ որդանցն գարշահոտութիւն և ապառումն և սոյնպէս ամենայն մարդ դառնայ յոչ մարդ:

254. Բարկացեալն արտաքս բերէ զսաղաղակն, այլ ոչ գիտէ զինչ խօսի:

255. Ամենայն մեղք փաղչին Աստուծոյ, բայց միայն հպարտութիւն ընդդիմանայ նմա:

256. Զոր օրինակ փութով անցանի հողմն, այսպէս և կեանք ամբարտաւանին:

257. Պատիւ տուեալ անարգաց ոչ առնէ զնոսա արժանաւորս, այլ՝ անարժանս:

258. Ամենայն յիմար՝ ստրուկ և ամենայն իմաստուն՝ ազատ:

259. Հպարտութեանն մի տայցես երբեք տեղի, զի նա էառ զկիզբն[9] ամենայն կորուստ:

260. Հպարտութիւն ոչ միայն է մեղք, այլև սկիզբն ամենայն մեղաց:

(Շարունակելի)

---

[8] Զեռ. բաղադրդրեալ:

[9] Զեռ. ի-ն ջնջված:

ով մեռնում է արդարությունը, անողորմի պատճառով տանջվում է ողորմությունը, թշվառականի պատճառով մերժվում է երջանկությունը, քացախով և լեղիով արբենում է քաղցրությունը:

240. Արդ՝ երկու յուրաքանչյուր տեսակների մեջ այսինքն՝ Քրիստոսով հացն ու գինին անբաժանելի են, այսինքն՝ մարմինը, հոգին և Աստված:

241. Ազատ մտքով գրքերի մասին խոկումը և նրանցով աստվածայիններին հպվելը մտքի համար դյուրություն է, իսկ մարմնի համար՝ անվաստակ ազատություն:

242. Առանց մտավորության գրքերի մասին կրթությունը հոգնեցնում է մարմինը, իսկ հոգին անմխիթար է դարձնում:

243. Ամեն ինչ կրթություն է՝ թե՛ չարը և թե՛ բարին:

244. Մարդն ստեղծվեց Աստծուն ճանաչելու և սիրելու, ինչպես նաև նրանով զմայլվելու համար, սակայն այս ամենը մեղքը խափանում է:

245. Աստված է ծայրագույն բարի և ճշմարիտ կյանքը, Որի մեջ, Որից և Որով գոյություն ունեն բոլորը:

246. Աստված իմանալի լույս է, Որի մեջ, Որից և Որով լուսավորվում են բոլորը:

247. Աստված ծայրագույն բարի է, որից են բոլոր բարիքները:

248. Աստված բոլորակերտող և նախանմանիչ է ոչնչից եղածների:

249. Ագահությունը սրընթաց որոգայթ է:

250. Մեղքը զրկումն է աստվածային օրենքներից և երկնային պատվիրաններից:

251. Մարմինը ստեղծված է ոչ միայն որպես զգեստ հոգու, այլ մանավանդ՝ նույնի փորձության (համար) իբրև ընտանի և բնական թշնամի:

252. Մարմնի առողջությունը և ուժեղությունը միշտ մարտնչում է արդարության խրատի դեմ և բարեկամ է չար իրողություններին:

253. Ժողովրդի կողմից մարմնի գեղեցկությունը և երիտասարդական եռանդը սիրելը, նաև փարթամությունը, վերացնում է քեզնից ճանաչողությունը, թե ինչ է մարդը, քանզի, մարդը ոչ այլ ինչ է, եթե ոչ քսակ աղբով լի, կերակուր որդերի, փտած մոխիր, կամ դյուրաածորելի, դյուրաթեք խեցեղեն և մորթի դիակների, մարդուց հետո որդն է, իսկ որդերից հետո՝ գարշահոտությունը և վախճանը, սույնպես և ամեն մարդ դառնում է ոչ մարդ:

254. Բարկացածը աղաղակ է արտաբերում, բայց չգիտի, թե ինչ է խոսում:

255. Բոլոր մեղքերը փախչում են Աստծուց, բայց միայն հպարտությունն է ընդդիմանում նրան:

256. Ինչ տեսակ փութով, որ հողմն է անցնում, այսպես և (անցնում է) ամբարտավանի կյանքը:

257. Անարգներին տրված պատիվը նրանց արժանավորներ չի դարձնում, այլ՝ անարժաններ:

258. Ամեն հիմար ստրուկ է, իսկ ամեն իմաստուն՝ ազատ:

259. Հպարտությանը երբեք տեղ մի տուր, որովհետև այն եղավ սկիզբը ամենայն կորստի:

260. Հպարտությունը ոչ միայն մեղք է, այլև սկիզբը բոլոր մեղքերի:

(Շարունակելի)